ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան 22.01.2019թ.

Ժամը՝ 15.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սարգսյան

Անդամներ՝ Հ. Ամիրյան

Ս. Դեմիրճյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով հայտերի գնահատման նիստը տեղի ունեցավ 22.01.2019թ., ժամը 15:00-ին, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վարչական շենք, 1-ին հարկ թիվ 6 սենյակ):

21.12.2018թ. թիվ 7 արձանագրության որոշմամբ «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

24.12.2018թ. հրապարակվել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով պայմանագիր կնքելու որոշումը:

08.01.2019թ. ծանուցվել է ընտրված մասնակից «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն թիվ 6 և 7 չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին:

16.01.2018թ. ստացված գրությամբ «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հրաժարվել է թիվ 6 և 7 չափաբաժիններով պայմանագիր կնքելուց:

17.01.2019թ.-ին, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 49-րդ դրույթների, ծանուցվել է հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ

(կոնսորցիումով) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու թիվ 6, 7 չափաբաժիններով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

21.01.2019թ. սահմանված ժամկետում՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով) մասնակցի կողմից ներկայացվել են մասնակցի որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև թիվ 6 և 7 չափաբաժիններով առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը):

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով) վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության մասին եզրակացություն, ինչպես նաև «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար բավարար տեղեկատվություն:

21.01.2019թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է թիվ 6 և 7 չափաբաժիններով մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը), գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի, 49-րդ կետի դրույթները, «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.19, 7.20, 7.21 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց***՝

Ա. Թիվ 6 և 7 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել՝

- «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին

Բ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության** տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Սամվել Սարգսյան

Անդամներ՝ _____ Համլետ Ամիրյան

_____ Սուսաննա Դեմիրճյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահակ Գագինյան